# ...ՑԵՐԵԿ Է ԵՂԵԼ, ԾԱՌԵՐԻՆ ԱՅԼ ՏԵՐԵՒՆԵՐ ԵՆ ԵՂԵԼ...

Զորայր Խալափյան, հայ գրող, դրամատուրգ, հեղինակ, որին բոլոր ժամանակներում գնահատել են. բեմադրել գործերը, թարգմանել բազմաթիվ լեզուներով և ընթերցել կյանքը իրական գույներով ներկայացնող հեղինակին, կինոսցենարներ ստեղծել նրա գործերի հիման վրա, ի՞նչ պետք է գրողին՝ սիրված ու գնահատված լինելու համար: Դեռ ավելին. կենդանության օրոք առաջինը նա է արժանացել «Ոսկե եղեգ» պետական մրցանակի՝ «Արա Գեղեցիկ և Շամիրամ» առասպելաբանության համար: Արժանացել է նաև ՀՀ գրողների միության Դերենիկ Դեմիրճյանի անվան և ՀՀ Կառավարության և ՀԳՄ սահմանած «Հրանտ Մաթևոսյան» մրցանակներին: Զորայր Խալափյանի «Վասիլ թագավոր հունաց կամ կճուճների թագավոր» վեպն արժանացել է մրցանակի այն տարիներին, երբ, ինչպես նշում է գրողի քույրը՝ Երևանի Մենեջմենթի համալսարանի ռեկտոր, տնտեսական գիտությունների թեկնածու Միլետա Խալափյանը, «ո՛չ հաց կար, ո՛չ լույս, ո՛չ թերթ, ո՛չ հեռուստատեսություն, ասել է՝ մնաց աննկատ»: Տարբեր ժամանակներում նրա գործերին անդրադարձել են Սերո Խանզադյանը /«Խոստումնալից մուտք մեծ գրականություն» հոդվածում, Գրական թերթ/, Դավիթ Գասպարյանը Հայ գրականության երրորդ գրքի Արձակ. «Ժամանակակից կյանք և ժամանակակից հերոս» ենթագլխում/, Ազատ Եղիազարյանը /«Գրողը, որն ստիպում էր մտածել» հոդվածում, Գրական թերթ/ և այլք: Զորայր Խալափյանի «Պատը» կամ «Տարբեր նվագներ» դրաման բեմադրվել է մի շարք բեմերում: Գրողի մի փոքրիկ պատմվածքի սյուժեի հիման վրա է նկարահանված հայ հանդիսատեսի սիրած կարճամետրաժ ֆիլմերից մեկը՝ «Թթենին» /ռեժ. Գ. Մելքոնյան/: Հայկական առաջին բազմասերիանոց՝ «Որտե՞ղ էիր, մարդ աստծո» ֆիլմը հեղինակի համանուն վեպի հիման վրա է նկարահանված, «Երիցուկի թերթիկներ» գործը, որ հետագայում վերածվեց դրամայի, բեմադրվել է Գյումրու դրամատիկական թատրոնում /բեմադրիչ՝ Երվանդ Ղազանչյան/:

«Այս ո՞վ է իմ մեջ անընդհատ փնտրում ինչ-որ մեկին»,- ասում է Զորայր Խալափյանի հերուսուհիներից մեկը՝ Արփենիկը /«Եվ վերադարձնելով ծեր դիմանկարը»/: Սա հոգեբանական նրբին հանգուցակետերից մեկն է, որը կարելի է վերագրել գրողի բոլոր գործերին: «Ճանապարհ» պիեսում /1963թ./ ժամանակն անշուշտ իր խոսքն ասել է իրականությունն արտահայտելու համար, սակայն փաստը մնում է փաստ, որ մարդկային ճակատագրերը մշտապես նման են եղել իրար: Մի կողմից՝ ժամանակաշրջանի ընդգծումն է, որ տարբերվում է մեկ այլ ժամանակաշրջանից, մյուս կողմից՝ մարդկային կյանքն է՝ իր զգացմունքներով, ապրումներով, երազներով ու երազանքներով, վերելքներով ու վայրէջքներով: Գրողի պիեսները կյանքի պարզ պատկերներն են, ճիշտ այնպես, ինչպես նրա հերոսների՝ անգամ խմելիս ասած կենացը, խոսք, որը գուցե և 60-ականների հայ գրականության մարգարտյա տողերից մեկն է. «Խմիր մտքում երգողների կենացը, տխուր եւ ուրախ երգողների: Դրանք կպահեն երկրագունդը»:

Պատերազմն ավարտվել է, անցել են տարիներ, բայց, ինչպես հերոսներից մեկի գլխի մեջ կենդանի մնացած գնդակն է ամեն անգամ նորից ու նորից վիրավորում նրան, հազարերորդ անգամ մթնեցնում գիտակցությունը, խունացած հիշողության ծվեններից ինչ-ինչ կայծեր առաջ բերում, այնպես էլ պատերազմի ամենակուլ երախին զոհ գնացած ամեն մարդկայինի հետ երբեք չեն սպիանում կորստի ցավի թողած վերքերը: Սակայն կյանքը շարունակվում է, նոր իրականությունը պետք է կառուցի նոր ճանապարհ: Գրողը դիմել է խորհրդանշական տողերի, թեև առկա է ներքին բողոքի ճիչը. «Ուղիղ ճանապարհները միշտ իմ բախտի վրայո՞վ պիտի անցնեն»: Իսկ ճարտասանական հարցերը զուգորդվում են պատկերավոր նկարագրություններով: Միաժամանակ ասես ասույթի է վերածվում գրողի խոսքը՝ մարդկային փոխհարաբերությունների, փոխադարձաբար միմյանց հասկանալու առումով: Հեղինակը ժամանակաշրջանը բնորոշող մի հարց էլ է առաջ քաշում՝ ծանր տարիներ ապրած սերունդների մտածողության, նաև հոգեբանության տարբերությունները, այսպես ասած, .կճովի թեյ խմողի, հոգեբանությունը, արյունոտ հողի գաղափարը, որը կրկին վերածվել է մարդկային մի ամբողջ սերնդի հոգեբանության: Սրան զուգահեռ՝ մարդկային կյանքի դիտարկումն է մեծ, տիեզերական իրականության հետ համեմատության մեջ, արդյունքում կյանքը մանր, անհետաքրքիր և ձանձրալի է թվում:

Սեր, հավատարմություն, պատիվ, իրական կյանք, ամուսնություններ առանց սիրո, ընտանիքներ, որտեղ զույգերին կապող օղակը միմիայն երեխան է, և հավերժ երջանկության փնտրտուք, զուցե և ապարդյուն: Ապրում են խալափյանական հերոսները՝ ուրախ ու տխուր, երջանիկ և դժբախտ՝ արտացոլելով իրական մարդկային կյանքը՝ վեր ժամանակային ու տարածական հարթություններից. Նրանց սրտերում երջանկության մշտակա փնտրտուքն է՝ լուռ ու բարձրաձայն, լացով և կամ թե ծիծաղով. «...Բա իմ տխրությունը, իմ մենությունը, կարոտս ինձ զգուշացրե՞լ էին, որ եկել, հոգիս ուտում էին...»,-հերոսներից մեկի բերանով բացականչում է գրողը /«Տարբեր նվագներ»/: Ուշագրավ է, որ նույն հոգեբանական նրբագծումներով առանձնանում են գրողի նաեւ հեղինակային ռեմարկները:

«...Իմ հայրը ազնիվ ու բարի մարդ է: Բայց ինչո՞ւ է բարին այդքան պասիվ, ինչո՞ւ է բարին միայն պաշտպանվում...»,- «հրաշք երեխայի» /համանուն գործից/ մենախոսությունը լիովին բացահայտում է բոլոր ժամանակների մարդուն, մյուս կողմից էլ՝ սա նաև հեղինակի մտահոգության կիզակետն է, նրա վերաբերմունքը, պարզորոշ դիրքորոշումը իրականության ցավոտ երևույթների հանդեպ: Մարդկայնորեն հասկանալի, զուսպ պոռթկումներ, սիրո, հավատարմության ու լռության բազմաթիվ զուգորդումներ, թվում է՝ անհասկանալի կապեր՝ հիմնված մերթ սիրո,



մերթ խղճահարության, մերթ էլ անծանոթ հարաբերությունների վրա, եւ մենություն, մեծ քաղաքի լույսերի ու մարդկային հոծ բազմության մեջ մենավոր հոգի, մարդկային հոգու մեկուսացում, որն արդեն իսկ սկիզբ էր առել հետպատերազմյան տարիներին և թվում է՝ մեր օրերում առավել քան ակնհայտ է եւ որին մեն-մի հուսադրող կանչ կա՝ լուսաբացը: «Օրորոցային» գործում /1968թ./ հերոսները նույնպես հետպատերազմյան ժամանակաշրջանի մարդիկ են, ապրում են նույն իրականության մեջ, և նրանցից յուրաքանչյուրին կյանքն այլ ձևով է տրվում, ուստի և ամեն մեկն ունի երջանկության չափման իր միավորը:

«...Ցերեկ է եղել, ծառերին այլ տերևներ են եղել: Ցերեկը հանգել է, մնացել են սենտիմենտալ ժպիտներ՝ ծաղիկներով լուսանկար...»:

Բանասիրական գիտությունների թեկնածու
ԿԱՐԻՆԵ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# ՈՐՏԵ՞Ղ ԵՍ, ՄԱՐԴ ԱՍՏԾՈ...

*«Երբ բարձրանում ես Կարին սարը ու նայում ես գյուղից հեռացող ճանապարհի ուղղությամբ՝ երեք քարդի ես տեսնում, որ երեք ճամփորդների նման ասես գալիս են դեպի գյուղ: Գալիս են ամեն օր, տարիներ շարունակ ու տեղ չեն հասնում, մնում են կանգնած ճամփի եզրին, կարծես հանգստանում են ու պիտի քայլեն: Ասես երեք եղբայրներ են, հարազատ եղբայրներ, որ հասակ են առել օտարության մեջ և հսկաներ դարձած վերադառնում են տուն: Վերադառնում են ամեն օր, տարիներ շարունակ ու տեղ չեն հասնում:*

*Իսկ հեռվից դեպի գյուղ նայողին թվում է հակառակը՝ գյուղից դուրս են եկել երեք հսկաներ, հարազատ եղբայրներ հասակն առած, առնականացած, ու գնում են գյուղից: Գնում են ամեն օր, տարիներ շարունակ ու չեն հեռանում, չեն պոկվում հողից, հարազատ տնից:*

*Կտրեցին մի օր քարդիները, ճանապարհը դատարկվեց:*

*Ու Հունանի տան կողքին շիվերով դեպի երկինք ձգվեցին երեք դալարաշյուղ քարդի: Աճեցին դարձան հսկաներ, ու մարդիկ զարմանքով տեսան, որ նույն քարդիներն են, ճանապարհի քարդիները, ճամփորդները, որ եկել վերջապես, տեղ էին հասել, հավիտյան անբաժան հայրական օջախից...»:*

*Զորայր Խալափյան*

Օրը խալափյանական էր Երևանի Մենեջմենթի համալսարանի Գյումրու կրթահամալիրի համար. ՀԳՄ Շիրակի մարզային բաժանմունքի գրողները, կրթահամալիրի եւ նրա մայր բուհի պատվիրակությունը հանդիպման համար ընտրել էին հյուրընկալ այս օջախը: Գրողի քրոջ՝ Համալսարանի ռեկտոր, տնտեսագիտության թեկնածու Միլետա Խալափյանի, ինչպես նաև գրողի եղբոր ու մյուս քույրերի հետ հանդիպումն իրականացավ նախ գրական հարթակում. ջերմ, անկաշկանդ զրույց, որն ընդմիջարկվում էր գիտական, ապա գեղարվեստական հատվածներով /գրողի տարբեր գործերից գեղարվեստական հատվածներ ընթերցեցին ԵՄՀ ուսանողուհիներ Հայկուհի Աղամյանը եւ Համիկ Հակոբյանը/, կրկին հաջորդում էին գրողի հարազատների հուշերը, հուզիչ պատմությունները՝ կապված Զորայր Խալափյան մարդու, գրողի հետ: ՀԳՄ Շիրակի մարզային բաժանմունքի նախագահ, բանաստեղծ Անդրանիկ Կարապետյանն իր խոսքում շնորհակալություն հայտնեց կազմակերպիչներին այն բանի համար, որ իրեն հնարավորություն է ընձեռնվել արտահայտելու իր սերն ու հարգանքը Զ. Խալափյան գրողի եւ մարդու հանդեպ և հուշեր պատմեց նրա մասին որով և ամբողջացրեց Խալափյանի մարդկային դիմանկարը: Նա մեջբերեց Խալափյանի «Որտե՞ղ էիր, մարդ Աստծո» վեպից հետևյալ հատվածը. «Երբ հանգչում են բոլոր լույսերը, մնում է միայն ճոճվող լապտերի լույսը, աշխարհը քառասուն տարով հետ է գնում, ու այդ հեռու անցյալում մեկ-մեկ վառվում են նավքի ճրագները»: Ապա ավելացրեց.

- Մենք այսօր եկել ենք քառասուն, գուցե հիսուն տարի հետ գնալու և ժամանակի մեջ որոնելու այն լույսը, որը բերեց Զորայր Խալափյանն իր գրականությամբ: Մենք այդ լույսը ճոճելով տասնամյակների մեջ, կերակրելով նրա բարոյականությամբ ու գեղագիտությամբ, հասնում ենք մեր օրերը, որտեղ լույսի անհրաժեշտությունն առավել քան մեծացել է ...







Ելույթ ունեցան գրողներ Արա Արթյանը եւ Շնորհիկ Շահինյանը: Գրականագիտական-վերլուծական խոսքով միջոցառման գիտական մասն ապահովեց հանդիպման կազմակերպիչը եւ օրվա բանախոսը /դասախոս, բ. գ. թ. Կ. Մարտիրոսյան/:

Հատկանշական է, որ օրը հասավ իր տրամաբանական ավարտին Գյումրու Վ. Աճեմյանի անվան դրամատիկական թատրոնում՝ Զ. Խալափյանի «Տարբեր նվագներ» ներկայացմամբ, որից հետո գրողի հարազատները հանդիպում ունեցան նաեւ ներկայացման ռեժիսորի, սցենարի հեղինակի եւ դերասանների հետ՝ հիացմունքի խոսքեր հնչեցնելով փայլուն դերասանական խաղի եւ շնորհակալություն հայտնելով ստացած տպավորությունների ու անմոռանալի հուզապրումների համար:

Կ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Դինո Բուցատի

# ԱՀԵՂ ԴԱՏԱՍՏԱՆԻ ՎԱՐՊԵՏԸ



Քանի որ մշտապես հետաքրքրվել եմ Հիերոնիմուս Բոսխ գեղանկարչով, մի անգամ՝ Հոլանդիայում գտնվելուս ժամանակ, եղա նրա քաղաքում՝ Hertogenbosch-ում, որ կոչվում է նաև Bois-le-Duc, և որը մենք անվանում ենք նաև Դքսի անտառ:

Հյուրանոցի տերը՝ բավական կրթված մի անձնավորություն, ինձ ասաց. «եթե այդպես հետաքրքրվում եք, պարոն, կարող եք այցելել ծերուկ Պետեր վան Ստելլերին: Նա մի քիչ տարօրինակ մարդ է, մասնագիտությամբ՝ ժամագործ, որ ապրում է մի փոքրիկ եկամուտով՝ իր կրպակը թոռանը թողնելուց հետո: Կարծեմ Hertogenbosch-ի ամենատարեց մարդն է: Ամբողջ կյանքը զբաղվել է Բոսխով. նաև համոզված է, որ Բոսխը իր նախնին է մորական կողմից: Տարիներ առաջ մի գրքույկ է գրել մեծ գեղանկարչի մասին, որն իր ժամանակին մեծ աղմուկ է հանել: Նա անսովոր մտքերի տեր անձնավորություն է: Ո՞վ գիտե, հանդիպումը նրա հետ գուցե ձեզ համար օգտակար լինի…»:

Սակայն, դա ասելով՝ նա ժպտում էր մի տեսակ՝ հեգնանքով, ու ես հարցնում էի ինքս ինձ, թե նա լո՞ւրջ է խոսում, թե՞ ծիծաղում է ինձ վրա:

Ինձ ցույց տրված հասցեում՝ մի փոքրիկ փողոցի վրա՝ քաղաքապետարանի շենքի հետևում, ես գտա երկուհարկանի մի փոքր տուն՝ կառուցված հին հոլանդական ոճով: Ճաղապատ դռան զանգը տվեցի, ու քիչ անց՝ եկավ բացելու մոտ վաթսունամյա մի կին, անսովոր կերպով կոկիկ հագնված, գողտրիկ սպիտակ շորագլխարկով: Քանի որ խոսում էր միայն հոլանդերեն, լավ չհասկացա, աղախի՞նն էր, թե՞ ծեր ժամագործի ազգականուհին: Բարեբախտաբար, օգնության հասավ մի անցորդ, որ գերմաներեն գիտեր: Այդպիսով իմացա, որ Վան Ստելլերը դուրս էր եկել հետմիջօրեի զբոսանքի ու վերադառնալու էր միայն մի ժամից: Սակայն, եթե չէի ուզում սպասել, կարող էի նրան գտնել քաղաքային զբոսայգում. Վան Ստելլերը միշտ նստում էր զբոսայգու մուտքից՝ աջ կողմի նստարանի վրա: Ու սխալվել հնարավոր չէր, քանզի նա Hertogenbosch -ի ամենատարեց մարդն էր ու կրում էր հնաոճ, շատ լայն եզրերով գլխարկ: Մի անցորդ ինձ ցույց տվեց ճանապարհը, ու քիչ րոպեներ անց ես տեսա այդ հետաքրքիր անձնավորությանը: Քանի՞ տարեկան կլիներ. ութսու՞ն, իննսու՞ն, երկու հարյո՞ւր: Տպավորիչ էր կնճիռների քանակը, որ ակոսում էին նրա ոսկրոտ դեմքը, սակայն այդ դեմքը դեռևս աշխույժ էր և նույնիսկ՝ մարտական:

Երբ մոտեցա, նա նայեց ինձ. նրա դեմքը տեսնելով՝ անմիջապես նկատեցի մի ապշեցուցիչ նմանություն Հիերոնիմուս Բոսխի միակ հավաստի համարվող դիմանկարի հետ: Նկատի ունեմ այն գծանկարը, որը պահպանվում է Արրասում. ճուռակի նույն թափանցող ու խորամանկ աչքերն ու վեհերոտ բերանը՝ քամահրական շուրթերով: Նույն մարդն էր, որ թվում էր, զառամել էր արդեն:

Ես ներկայացա և ուրախացա՝ փաստելով, որ Վան Ստելլերը բավական լավ խոսում էր գերմաներեն: Սակայն, պետք էր գրեթե գոռալ նրա ականջի տակ, քանի որ վատ էր լսում:

-Ո՞վ է ձեզ ասել, որ ինձ դիմեք, -հարցրեց նա: Իսկ երբ իմացավ, մի կարճատև քմծիծաղ հայտնվեց նրա դեմքին. երևի հյուրանոցի տիրոջը համարում էր քիչ վստահելի անձնավորություն:

– Դուք եկել եք իմ հետևից մեծն Հիերոնիմուսի համա՞ր: Է՛…Ամենից առաջ, պարտքս է ձեզ զգուշացնել, պարոն, որ այս քաղաքում ինձ մի քիչ խենթ են համարում:

Ու ագռավի կռկռան ձայնով ծիծաղեց:

Ես նստել էի նրա կողքին: Իր կմախքային ու դողդողուն ձեռքով նա սեղմեց ձեռքս:

-Դուք, պարո՛ն, հեռվից եք գալիս ու չեք կարող իմանալ գավառական այդ բամբասանքների մասին. դրանք չեն կարող ձեզ հետաքրքրել, բայց դուք ինձ համակրելի եք: Ձեզ, եթե հավատում եք, կարող եմ որոշ բաներ ասել: Է՛…Կարծում եմ՝ նկատեցիք, որ ես նման եմ ինչ-որ մեկին:

-Ապշեցուցիչ կերպով, -ասացի ես: Մի՞թե անհավատալի պատահականություն է:

-Պատահականությո՞ւն: Կարծում եք՝ պատահականությո՞ւն է:

-Ուրեմն, դուք վստա՞հ եք ձեր ազգակցական կապի վրա:

-Ո՞վ գիտե, ո՞վ գիտե,- ասաց նա հանելուկային հնչերանգով: Որոշ բաներ մենք երբեք չենք կարող իմանալ:

Ու չսպասելով, որ ես դա խնդրեմ, նա սկսեց պատմել ինձ իր պատմությունը:

Իր հայրը ժամագործ էր եղել, ու ինքը հնազանդորեն գնացել էր իր հոր հետքերով՝ միշտ զբաղվելով առևտրով: Բայց դեռ պատանեկան տարիքից, ինչ-որ ուժ նրան միշտ ձգել էր դեպի այն ամենն, ինչ առնչվում էր հանրահայտ գեղանկարչին, որին իրենց ընտանիքում համարում էին իրենց նախնին՝ մոր կողմից (նրա մոր օրիորդական ազգանունը Ակեն էր):

Չափահաս դառնալուց հետո իրեն հաջողվել էր տեսնել Բոսխի գրեթե բոլոր հայտնի նկարները. եղել էր Վիեննայում, Բեռլինում, Փարիզում, Վենետիկում, Լիսաբոնում ու մի քանի անգամ՝ Մադրիդում:

Մինչ Վան Ստելլերը խոսում էր, ինչ-որ բան ինձ ստիպեց ցնցվել. ինձ թվաց, թե աչքի պոչով տեսա մի մութ բան, որը, դուրս գալով ցանկապատի միջից, իմ հետևում սկսեց ցատկոտել խոտի վրա: Բայց երբ նայեցի ուշադիր, ամեն ինչ սովորական էր ու խաղաղ:

Ոչ ոք այն քննադատներից, անգամ՝ հեղինակավոր ու անվանի, որոնք գրել էին Բոսխի մասին, հազիվ թե այդքան համոզիչ լինեին, որքան վան Ստելլերը:

-Խոսում են դժոխքի, հավիտենական դատապարտության, հերետիկոսությունների, Լութերի բարեկարգության մասին, Հիերոնիմուսի անձնական կյանքն են քրքրում, որ նրանցից ոչ մեկը չի կարող իմանալ, հարյուրավոր էջեր լցնում են երկարաշունչ մեկնաբանություններով. է՜լ հոգեվերլուծություն, է՜լ էկզիստենցիալ անձկություն՝ չորս հարյուր տարվա կանխարկումով: Նաև՝ սյուրռեալիզմ՝ չորս հարյուր տարվա կանխարկումով…Նրանցից մեկն անգամ՝ մատյանի մեջ մեկ առ մեկ գրանցել էր Բոսխի հրեշներին (է՛, դրանց հրեշներ են անվանում), դրանք դասակարգել որպես կարծրաթևավորներ… ու դրանցից յուրաքանչյուրի հետ կապել համապատասխան նևրոզի տեսակ: Ու այդտեղից էլ՝ անխուսափելի մանիքեյականությունը: Հապա սեռական արտամղումնե՛րը… բարդույթնե՛րը… սոդոմական բաղադրի՛չը…. էզոտերի՛զմը…

Ի՛նչ անօգուտ զբաղմունք:

Ստելլերը դադարել էր խոսելուց ու իր բարակ ձեռնափայտով ջղայնորեն գետնին էր խփում:

-Բայց նա այնքա՛ն պարզ, այնքա՛ն հասկանալի նկարիչ է: Երբևէ գոյություն չի ունեցել նրանից ավելի իրապաշտ ու պարզ նկարիչ…Ի՞նչ երևակայամոլություն, ի՞նչ մղձավանջներ, ի՞նչ սև մոգություն….Մերկ ու հում իրականությունն էր նրա առաջ…

Միայն թե՝ նա հանճար էր, ու տեսնում էր այն, ինչը ոչ ոք նրանից առաջ ու նրանից հետո ունակ չէր տեսնելու: Նրա ողջ գաղտնիքը դա է. նա մի մարդ էր, որ նկարում էր այն, ինչ տեսնում էր…

Ես ասացի.

-Հասկանում եմ: Անշուշտ, գեղարվեստական տեսակետից նկատի ունեք…Սակայն դուք հո չե՞ք պնդի, թե այդ բոլոր զարհուրելի էակները, այդ մարդակերպ սողունները, անպարկեշտ մեխանիզմները, մարմնի անդամների վերածված գործիքները, թզուկներն ու զարշելի միջատները նա տեսնում էր իրականում, ասես՝ դրանք չորս հարյուր տարի առաջ վխտում էին Հոլանդիայի ճանապարհների վրա:

-Չէ՞ր տեսնում դրանք, -ասաց նա ամբարտավանորեն: Չէին վխտո՞ւմ մեր ճանապարհների վրա: Օ՛, մի՛ խոսեցրեք ինձ:

Այդտեղ նա այլևս չկարողացավ իրեն զսպել. խոստովանեց, որ ինքը ևս, ոչ բոլոր օրերին, բայց բավական հաճախ «տեսնում էր» աշխարհն այնպես, ինչպես Բոսխը:

Սկսում էի հասկանալ, թե ինչու հյուրանոցի տերը, ինձ տալով Վան Ստելլերի հասցեն, մի տեսակ խորհրդավոր ժպտաց:

-Բայց դուք ասացիք, որ երբևէ ցանկություն չեք ունեցել նկարելու:

-Սպասեցե՛ք,- ասաց Վան Ստելլերը շողոքորթորեն,- սպասեցե՛ք, քիչ հետո ձեզ մի բան եմ ցույց տալու:

Նկատեցի, որ հասել էինք նրա տուն: Ասաց, որ հետևեմ իրեն: Մտանք ներս: Կանգ չառանք առաջին հարկում, որտեղ, հավանաբար, ննջասենյակներն էին: Ելանք վերևի հարկ ու մտանք թեք կտուր ունեցող մի շքամուտք: Նա լույսը վառեց: Վառ լույսի շողը լուսավորեց մի անավարտ մեծ կտավ, որ դրված էր նկարակալի վրա: Ներքևում՝ մի սեղանի տակ, վրձիններ էին, ներկեր ու ներկապնակ:

Դա երևի Բոսխի անավարտ մի կտավն էր: Մնացի ապշած: Դա մեծ գեղանկարչի ամենադաժան ու ամենահուսահատ գործերից էր, որ երբևէ տեսել էի: Սակայն, երբևէ ոչ մի գրքում կամ ալբոմում չէի հանդիպել:

-Բայց սա իսկական Բոսխ է, չէ՞: Նրա՞ գործն է: Որտեղի՞ց եք գտել այն: Եվ ինչո՞ւ է այն անավարտ:

Վան Ստելլերը նայեց ինձ ՝ժպտալով.

-Ո՛չ, ո՛չ, սա հասարակ կրկնօրինակ է…

-Սակայն, սակայն ինձ հիշեցնում է…

Վան Ստելլերը երջանիկ զգաց իրեն.

-Ճանաչեցի՞ք: Սա Ահեղ Դատաստանն է, որը ոչնչացել էր Պրադոյի հրդեհի ժամանակ: Հիշում եք, չէ՞, Համեելի համապատասխան փորագրանկարը:

Այո՛, անմիջապես հիշեցի: Այդ թանկարժեք գեղանկարից, որը մոխրացել էր կրակի բոցերի մեջ, միայն մեկ վկայություն էր մնացել…բայց հիմա, այստեղ, իմ աչքերի առաջ, գլուխգործոցը կիսով չափ հարություն էր առել:

-Ինչպե՞ս է դա հնարավոր, -ասացի ես:

-Երբեմն, -ասաց Վան Ստելլերը,- նա այցելում է ինձ:

-Ո՞վ:

-Նա՛ մեծն Հիերոնիմուսը:

-Ինչպե՞ս թե:

Վան Ստելլերը վազեց մի սեղանի մոտ, որի վրա շատ թղթեր կային, ու նստեց դրա առաջ: Վերցրեց մի մատիտ, ծայրը դրեց մի թղթի վրա…մատիտը սկսեց ինքն իրեն շարժվել:

-Նա այստե՛ղ է, այստե՛ղ է: Այս երեկո եկել է,-հայտարարեց նա զմայլվածի ձայնով:

Բախտավո՛ր մարդ էք, պարոն:

Ուրեմն, ծեր ժամագործը ոգեհա՞րց էր:

Միաժամանակ, ու լույսը այնպիսին էր, որ խաբեություն չէր կարող լինել, երկու վրձինները սեղանի վրայից իրենք իրենց ելան վեր՝ երկու վարժեցրած կենդանիների նման, թաթախվեցին ներկապնակի մեջ, հետո ուղղվեցին դեպի նկարը…

Տեսիլախաբկա՞նք էր: Վան Ստելլերը, չնայած յուրատեսակ զմայլանքի մեջ, կարողացավ ասել.

-Նայեցե՛ք, նայեցե՛ք պատուհանից դուրս:

Ես նայեցի: Ու հասկացա այն, ինչը ծեր ժամագործը քիչ առաջ ջանացել էր ինձ բացատրել: Այո, Հիերոնիմուս Բոսխը ոչինչ չէր հնարել. նա նկարել էր ամենօրյա կյանքն այնպիսին, ինչպիսին այն ներկայացել էր իր աչքերին:

Վերևից կարող էի տեսնել միայն դիմացի տունն ու դրան հարակից տների մի մասը: Բայց այդ գիշերվա կախարդանքով՝ դրանք դարձել էին թափանցիկ, ու դրանց ներսում երևում էին մարդիկ, որոնք ուտում էին, քնում, կռվում իրար հետ… Տղամարդիկ էին, կանայք ու երեխաներ, այնպիսին, ինչպիսին մեր ամենօրյա կյանքում, բայց նրանց մեծամասնություն կազմելով խռնված էին անթիվ-անհամար կենդանիներ, որոնք նման էին աղեխորշավորների, ոստրեների, գորտերի, շնչահեղձ լինող ձկների, մաղձոտ գեկոնների, Հիերոնիմուս Բոսխի, այսպես կոչված, հրեշների նման, և որոնք այլ բան չէին, քան մարդկային էակներ, մարդկության իսկական էությունը, որը շրջապատում է մեզ: Նրանք հաչում էին, փսխում, խռնվում իրար՝փսլինքները կախ ընկած: Ինչպես որ մենք ենք պատառոտում մեկս մյուսիս գիշեր-ցերեկ, գուցե և դա չգիտակցելով:

Հետո, այդ հայտնությունը միանգամից չքացավ…

Նորից տիրեց գիշերվա լռությունը, իրերի անշարժությունը: Ամեն ինչ այնպես էր, ինչպես իմ մտնելու պահին, բացի սեղանի վրայի այդ զզվելի կիսասալամանդր-կիսաթռչուն պատկերող կաղապարից, որն իմ մտնելու պահին չկար: Ուշադրությամբ նայեցի նկարին: Այն նկարված էր մեծ գեղանկարչին հատուկ կատարյալ վարպետությամբ: Նկատելի էին մինչև անգամ գույնի ճաքերը, որ միայն դարեր ձգվող ժամանակը կարող է հարուցել:

-Ոչ ոք չի՞ տեսել սա, -հարցրի:

-Ոչ ոք:

-Բայց հետո…

-Իմ մահվանից հետո՞, ուզում եք ասել: Ո՛չ, պարո՛ն, ոչ ոք սա չի տեսնի երբեք: Ես խենթ եմ, թշվառ մի խենթ: Դա է իմ գաղտնիքը: Ես ցանկություն եմ հայտնել, որ դա անհետանա ինձ հետ միասին:

*Իտալերենից թարգմանեց*
Գառնիկ Մելքոնյանը

# ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԼՐԱՀՈՍ

## ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԳՄ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԵՏ

Ապրիլի 28-ին ՀԳՄ Շիրակի մարզային բաժանմունքում ՀԳՄ անդամ շիրակցի գրողները հանդիպեցին ՀԳՄ նախագահ Էդվարդ Միլիտոնյանի հետ: Հանդիպման ընթացքում արծարծվեցին թե՛ ստեղծագործական և թե՛ կազմակերպչական բնույթի հարցեր: Առավել սուր քննարկվեց տպագրվող գրքերին պետական աջակցությունը դադարեցնելու հարցը: Գրողներն այդ առիթով հայտնեցին իրենց խորը մտահոգությունը:

Էդվարդ Միլիտոնյանը պատասխանեց առաջադրված հարցերին, նախանշեց այն ճանապարհները, որոնցով հնարավոր է դուրս գալ ստեղծված իրավիճակից:

ՀԳՄ նախագահը բարձր գնահատեց Շիրակի մարզային բաժանմունքի աշխատանքները և խոստացավ, որ առաջիկայում ևս Շիրակի գրական կազմակերպության անդամները անմասն չեն մնա բոլոր այն ծրագրերից, որոնք կիրականացվեն Հայաստանի գրողների միության կողմից:

Այնուհետ ՀԳՄ նախագահության անունից Էդվարդ Միլիտոնյանը ֆինանսական աջակցություն ցուցաբերեց բանաստեղծուհի Հրանուշին:

## ԳՐՈՂԻ ՈՒՂԻՆ

Գյումրու գեղարվեստի ակադեմիայի դահլիճում տեղի ունեցավ «Շիրակ» թերթի գլխավոր խմբագիր, բանաստեղծ Սամվել Մարգարյանի 65-ամյակին և ստեղծագործական 45-ամյա գործունեությանը նվիրված գրական ցերեկույթ: Բեղուն է Սամվել Մարգարյանի ստեղծագործական ուղին՝ մոտ 27 անուն հրատարակված գրքեր, ռուսերեն, վրացերեն, անգլերեն լեզուներով թարգմանաբար ներկայացված ստեղծագործություններ:

Սամվել Մարգարյանին շնորհավորեցին և ստեղծագործական հաջողություններ մաղթեցին ՀԳՄ նախագահ Էդվարդ Միլիտոնյանը, ՀԳՄ Շիրակի մարզային բաժանմունքի պատասխանատու քարտուղար, բանաստեղծ Անդրանիկ Կարապետյանը, գրչակիցներ, ինչպես նաև մարզային և քաղաքային իշխանության ներկայացուցիչներ: Ելույթ ունեցան Շիրակի մարզպետ Հովսեփ Սիմոնյանը, մարզպետի խորհրդական Հասմիկ Կիրակոսյանը, փոխքաղաքապետ Ռուբեն Սանոյանը, որը բանաստեղծին շնորհավորական ուղերձ հաղորդեց քաղաքապետ Սամվել Բալասանյանի անունից և քաղաքապետարանի կողմից հանձնեց ոսկե հուշամեդալ: Բանաստեղծին բարեմաղթանքի խոսքեր հղեցին բան. գիտ. դոկտոր Գագիկ Խաչիկյանը, Հ. Շիրազի հուշատուն-թանգարանի տնօրեն Արա Պապանյանը, բանաստեղծ-թարգմանիչ Արա Գևորգյանը, ինչպես նաև Երազգավորս համայնքի ղեկավար Արտաշես Մխիթարյանը, որը ներկայացրեց ավագանու որոշումը Սամվել Մարգարյանին Երազգավորս համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու մասին:

Երևանի կինոյի և թատրոնի պետական ինստիտուտի Գյումրու մասնաճյուղի ուսանողներն ընթերցեցին հեղինակի տարբեր տարիների ստեղծագործություններից:






*Աշոտ Մելիքյանը թեև ստեղծագործում է երիտասարդ տարիներից, ընթերցողների լայն շրջանակներին ներկայացավ բավականին ուշ: Առաջին գիրքը՝ «Սեր և կարոտ» բանաստեղծությունների ժողովածու, տպագրվել է 2014թ.: Այնուհետև տպագրվեցին «Ես իմ հավատի զորավոր խաչով» (2014թ.), «Խնձորենիս» (2015թ.) և «Մայրամուտի կրակներ» (2016թ.) ժողովածուները, որոնք ներառում էին հեղինակի թե՛ չափածո և թե՛ արձակ ստեղծագործությունները:*

*Վերջերս լույս ընծայվեց հեղինակի «Արևը մնացողներին» գիրքը, որտեղ տեղ են գտել նրա արձակ գործերը: Այն գրեթե ամբողջական ու արժեք մի հոգևոր հուշարձան է, որը երբեմն կենսագրություն է, երբեմն աշխարհընկալում, բայց միշտ հուշաթաթախ ու ... ապրող:*

*Ընթերցողին ենք ներկայացնում վերջին գրքից մեկ պատմվածք:*

**ՑԼԱՎԱԶՔ**

-Այո՛, այո՛, ցլավազք, և ոչ թե ցլամարտ:

Հայրս այդ օրը չէր աշխատում, բայց դա ինձ չխանգարեց, որ բոստան գնամ հսկելու, որ երեխաներն ու կենդանիները չմտնեն դեռ նախորդ գիշեր ջրած հողակտորն ու վնաս չպատճառեն արդեն հասունացող բերքին:

Օգոստոսին էր, շոգ: Յոթերորդ էի փոխադրվել և դպրոցական արձակուրդներն անցկացնում էի գլխավորապես արտում կամ բոստանում:

Ջմռանը ձնահոսքից երկաթուղագիծը պաշտպանելու նպատակով գծի երկայնքով եռաշերտ ծառեր էին տնկված: Նրանցից մեկի՝ մի փշատենու մոտ կանգնած նայում էի գծանցի պահակատանը:

Մտազբաղ, դանդաղ սկսեցի քայլել՝ տեսնելու, թե որքանով է հաջող եղել գիշերվա ջրտուքը, մարգերում պատահմամբ հողը հո չոր չի՞ մնացել, երբ չգիտեմ որտեղից և ինչպես մի անկոչ ցուլ հայտնվեց ու սկսեց տրորել թաց մարգերն ու հողի, բնության պարգևած բարիքները:

Այս հսկան իրեն շատ հանգիստ էր պահում, և ես կարծում էի, որ նրանից վախենալու հիմքեր չպիտի ունենամ: Այդ մտադրությամբ էլ վերցրի մի քար և այն է պատրաստվում էի հարվածել...

Ցուլը կատաղեց ու սարսափելի գոռոցով ընկավ իմ հետևից: Ես լարեցի ողջ ուժերս ու գծի պես, առանց դիմացս նայելու սկսեցի փախչել: Սկսվեց իսկական ցլավազքը: Ես ցուլից էի փախչում, որ փրկվեմ, նա վազում, հետապնդում էր ինձ իր արժանապատվությունը վիրավորելու համար: Եթե Աստված մի արասցե ոտքս մի բանի դիպչեր ու ընկնեի... Լսվեց անիվների ծանոթ, համաչափ ու ռիթմիկ դղրդոց, և ես հասկացա, որ գնացք է գալիս: Ցուլը հանկարծակիի գալով կանգ առավ, մի պահ շուրջը նայեց և հետ դարձավ: Բեռնատար շոգեքարշի ժամանակին հայտնվելը ինձ փրկեց անխուսափելիից, իսկ կատարվածը դաս հանդիսացավ, որ ամեն կենդանու չփորձեն քար ու փայտով վախեցնել:

Նրանք էլ, հատկապես հզորները, արժանապատվության և ինքնասիրության զգացումներ ունեն:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԻՐՏԸ, ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՈՒՐԻՇ ՈՉԻՆՉ

Ապրիլի 9-ին «ARTbogen» գերմանախոսների մշակութային կենտրոնի նախաձեռնությամբ տեղի ունեցավ «Հայաստանի սիրտը, բանաստեղծություններ...և ուրիշ ոչինչ» գերմաներեն անթոլոգիայիշնորհանդեսը, որին մասնակցում էին գրքի թարգմանիչներ՝ Ազատի Մկրտչյանը և Հելմուտ Մալոնեկը:

Գրքում տեղ էին գտել հայ ժամանակակից 25 բանաստեղծների ստեղծագործություններից, որոնք ընթերցվեցին թե՛ բնագրի լեզվով և թե՛ գերմաներեն: Ազատի Մկրտչյանն անդրադարձավ անթոլոգիայի ստեղծման նախապատմությանը և բացառիկ հուզայրումով ընթերցեց իր թարգմանություններից: Շնորհանդեսին ներկա հեղինակ, երգահան Լիլիթ Սարգսյանն իր ստեղծագործությունը ներկայացրեց երաժշտական կատարումով: ՀԳՄ Շիրակի մարզային բաժանմունքի նախագահ, բանաստեղծ Անդրանիկ Կարապետյանը, արձակագիր Շնորհիկ Շահինյանը, բանաստեղծներ Արա Արքյանը, Սերգեյ Վարոսյանը և Ռոզա Հովհաննիսյանը, սրտի խոսք հղելով գրչակից ընկերներին անթոլոգիայի հրատարակման առիթով, իրենց ստեղծագործությամբ ողջունեցին ներկաներին:

«Բեռլին» Հյուրերի տան տնօրեն Ալեքսան Տեր-Մինասյանը օրվա խորհուրդը գնահատեց հնարավոր շարունակության մեջ՝ գրական թարգմանական նոր անթոլոգիայի ստեղծման ակնկալիքով:

Շնորհանդեսի ընթացքում հնչեցին դասական ստեղծագործություններ /ջութակահար Եղիա Անսուրյանի կատարումները/:

*Մարինե Հակոբյան*




## ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐՔԻ ՇԱԲԱԹ

Մանկական գրքի շաբաթվա շրջանակներում Ամասիայի համայնքային գրադարանի հանրույթը և ընթերցող դպրոցականները հյուրընկալեցին մանկագիրներ՝ Սուքիաս Աղալարյանին և Շնորհիկ Շահինյանին:

Հանդիպմանը մասնակցում էին նաև ՀԳՄ Շիրակի մարզային բաժանմունքի նախագահ Անդրանիկ Կարապետյանը և Շիրակի մարզային գրադարանի փոխտնօրեն Գեղեցիկ Գևորգյանը, որոնք ներկայացրին մանկագիրներին կարևորելով նմանատիպ հանդիպումները:

Ջերմ ու մտերմիկ մթնոլորտում անցավ հանդիպումը: Գրողներն ընթերցեցին իրենց ստեղծագործությունները, դպրոցականները խանդավառությամբ արձագանքեցին ընթերցված մանկական յուրաքանչյուր բանաստեղծությանը, այնուհետև սկսվեց գրողներին ուղղված բազմաբնույթ հարցերի տարափը: Աշխույժ ասուլիսն ավարտվեց գրողներից ինքնագիր ստանալու արարողությամբ:

Հանդիպման վերջում Ամասիայի գրադարանին Շիրակի մարզային գրադարանի և ՀԳՄ Շիրակի մարզային բաժանմունքի կողմից նվիրվեցին գրքեր, թերթեր և ամսագրեր:

***

Վաղուց արդեն ավանդույթ է դարձել Համահայկական մանկական գրքի փառատոնը Հայաստանի տարբեր մարզերում: Մանկական գրքի շաբաթը այս տարի բացվեց Ապարանում, և մարտի 27-ին փակումը տեղի ունեցավ Երևանի Խնկո-Ապոր գրադարանում: Դահլիճը լեփ-լեցուն էր պատանի ընթերցողներով: Նրանց հյուր էին եկել մանկագիրներ, գրողներ, ուսուցիչներ: ՀԳՄ նախագահ Էդվարդ Միլիտոնյանը իր ելույթում կարևորեց մանկական և պատանեկան գրքերի դերն ու նշանակությունը մատաղ սերնդի կրթության և դաստիարակության գործում: Նա հորդորեց դպրոցականներին ընթերցել, սովորել և ճանաչել ոչ միայն հայ դասական գրողներին, այլև ժամանակակիցներին: Այնուհետև ելույթ ունեցավ «Ծիծեռնակ» ամսագրի գլխավոր խմբագիր, մանկագիր Անուշ Վարդանյանը, որը դպրոցականներին ուղղված իր ջերմ խոսքով, մտերմիկ զրույցով և վերջերս լույս տեսած մանկական գրքերի ցուցադրմամբ ու մեկնաբանություններով արժևորվեց գիրքը, ընթերցանությունը: Ելույթ ունեցան մանկագիր Սուրեն Մուրադյանը, արձակագիր Շնորհիկ Շահինյանը, Սաթենիկ Ղազարյանը: Իրենց ասմունքով ցերեկույթին առանձին հմայք պարգևեց Խնկո-Ապոր գրադարանի պատանի ասմունքողների խումբը: Նրանք ներկայացրին դասական և ժամանակակից մանկագիրների ստեղծագործությունները: Ցերեկույթի ավարտին ՀԳՄ նախագահ Էդ. Միլիտոնյանը անակնկալ մատուցեց արձակագիր-մանկագիր Շնորհիկ Շահինյանին՝ նրան հանձնելով ՀԳՄ նախագահության ամենամյա՝ 2016թ. Վախթանգ Անանյանի անվան մրցանակը «Անին ու քամին» մանկական գրքի համար: Ներկաները ջերմ շնորհավորեցին հեղինակին և նրա 6-ամյա թոռնուհուն՝ Անիին, որին նվիրված էր «Անին ու քամին» գիրքը:

**Շնորհիկ Շահինյան**

Հրատարակված է ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
Հայաստանի Գրողների Միության Շիրակի
մարզային մասնաճյուղ:
Հասցեն՝ Շիրակի մարզ, Գյումրի, Գորկու 62
Վկայական N 01Բ 001543

տրված է 21.03.2005թ.
հեռ. (0312) 5 65 97
Խմբագրական խորհուրդ
Համարի պատասխանատու՝
Ռոզա Հովհաննիսյան

Համակարգչային ձևավորումը՝ «Էլդորադո»
Տպագրված է «Գյումրի տպարան» ԲԲԸ
տպագրատանը
Տպաքանակը՝ 500
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ